Հաստատված է
«Ճարտարապետության և շինարարության
Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի
Գիտական խորհրդի 2026 թվականի մարտի 18-ի նիստում
Արձանագրություն №02-03/26
Գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր
Մ.Գ. Բարսեղյան

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (այսուհետ՝ Համալսարան) Կրթության զարգացման և նորարարությունների կենտրոնի (այսուհետ՝ Կենտրոն) գործունեության առարկան ու հիմնական ուղղությունները, կառուցվածքը, գործառույթները և կառավարման առանձնահատկությունները:

2. Կենտրոնը Համալսարանում կրթության զարգացման, որակի ապահովման, նորարարության և ինստիտուցիոնալ առաջընթացին առնչվող գործառույթների կազմակերպման և համակարգման կառուցվածքային ստորաբաժանում է:

3. Կենտրոնը գործում է Համալսարանի ռեկտորի անմիջական ենթակայությամբ:

4. Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է «Բարձրագույն կրթության և գիտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին, Համալսարանի կանոնադրությանը, Համալսարանի ներքին իրավական ակտերին և սույն կանոնակարգին համապատասխան:

5. Կենտրոնի գործունեության առարկան է՝ նպաստել Համալսարանում մրցունակ, արդիական և որակյալ մասնագիտական կրթության զարգացմանը, խթանել կրթական նորարարությունները, շարունակական և լրացուցիչ կրթությունը, ինստիտուցիոնալ

զարգացման գործընթացները, ինչպես նաև ապահովել Համալսարանի գործուն ներգրավվածությունը ազգային և միջազգային կրթական ու զարգացման գործընթացներում՝ ձևավորելով և զարգացնելով այնպիսի կրթական և ինստիտուցիոնալ միջավայր, որը հիմնված կլինի որակի, տվյալահենք կառավարման, նորարարության և արտաքին համագործակցության վրա և կնպաստի Համալսարանի կայուն զարգացմանն ու միջազգային մրցունակության բարձրացմանը:

6. Կենտրոնը կարող է ունենալ պաշտոնաթուղթ (հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով) և անհատականացման այլ միջոցներ:

II. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

7. Կենտրոնը, սույն կանոնակարգով սահմանված գործունեության առարկային համապատասխան, իր աշխատանքները ծավալում է հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգի զարգացում և կատարելագործում,
2) կրթական ծրագրերի որակի, արդյունավետության և արդիականության ապահովում,
3) շարունակական և լրացուցիչ կրթության կազմակերպում և զարգացում,
4) ռազմավարական զարգացման ծրագրերի և ինստիտուցիոնալ պլանավորման կատարելագործում,
5) կրթական դրամաշնորհային ծրագրերի շրջանակի ընդլայնում,
6) միջազգային վարկանիշավորման և ինստիտուցիոնալ դիրքավորում,
7) կրթական նորարարությունների խթանում,
8) շահառուների հետ համագործակցության և հետադարձ կապի ապահովում:

8. Կենտրոնի գործունեության հիմնական սկզբունքներն են՝

1) շարունակական զարգացում,
2) աջակցող և համագործակցային մոտեցում,
3) տվյալահենք և թափանցիկ կառավարում,
4) նորարարություն և նախաձեռնողականություն,
5) միջազգային համադրելիություն:

III. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Կենտրոնն իրականացնում է կրթական նորարարությունների խթանման, կրթության զարգացմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի աջակցություն և ռազմավարական բնույթի ուսանողական նախաձեռնությունների կազմակերպում:

10. Հավատարմագրման, դրամաշնորհային ծրագրերի մշակման, նորարարական և միջազգային վարկանիշավորման աշխատանքների կազմակերպման նպատակով Կենտրոնի առաջարկությամբ, ռեկտորի համապատասխան իրավական ակտով կարող են ձևավորվել մասնագիտական աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ:

11. Կենտրոնը մասնակցում է նոր և վերանայված կրթական ծրագրերի մշակման գործընթացներին՝ դրանց որակի, համապատասխանության ու արդյունավետության վերաբերյալ կազմելով մասնագիտական եզրակացություն:

12. Կենտրոնն իր իրավասության շրջանակում աջակցում է կրթության զարգացմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի նախաձեռնման, մշակման, իրականացման և համակարգման գործընթացներին:

13. Համալսարանի միջազգային տեսանելիության և դիրքավորման բարձրացման նպատակով Կենտրոնն իրականացնում է կրթական ոլորտի ռազմավարական պլանավորմանը, արտաքին համագործակցության խթանմանը, կրթական ծրագրերի մրցունակության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

14. Կենտրոնը սահմանված կարգով կազմակերպում է հարցումներ կրթության որակի, կրթական ծրագրերի արդյունավետության, ուսուցման գործընթացի, շրջանավարտների զբաղվածության, աշխատաշուկայի պահանջների, շարունակական կրթության և Համալսարանի զարգացման այլ ուղղությունների վերաբերյալ:

15. Կենտրոնը գործունեություն է ծավալում իր ենթակայության տակ գտնվող հետևյալ բաժինների միջոցով՝

1) Որակի ապահովման բաժին,

2) Շարունակական և լրացուցիչ կրթության բաժին,

3) Ռազմավարական պլանավորման և զարգացման բաժին:

16. Կենտրոնի ընթացիկ գործունեությունը կազմակերպում է Կենտրոնի ղեկավարը, իսկ նրա ենթակայության տակ գտնող բաժինները ղեկավարում են բաժինների ղեկավարները:

17. Կենտրոնի ղեկավարը

1) ապահովում է սույն կանոնակարգով սահմանված գործառույթների իրականացումը,
2) կազմակերպում, համակարգում և վերահսկում է Կենտրոնի բաժինների գործունեությունը,
3) Համալսարանի ռեկտորին սահմանված պարբերականությամբ ներկայացնում է հաշվետվություններ Կենտրոնի ընթացիկ գործունեության և սույն կանոնակարգով սահմանված առանձին գործառույթների կատարման վերաբերյալ, ինչպես նաև առաջարկություններ Կենտրոնի և (կամ) Համալսարանի այլ ստորաբաժանումների գործունեության արդյունավետության բարձրացման վերաբերյալ,
4) ապահովում է Կենտրոնի գործունեությանն առնչվող՝ Համալսարանի հոգաբարձուների խորհրդի, գիտական խորհրդի որոշումների, ներքին իրավական այլ ակտերի կատարումը,
5) իր իրավասության սահմանում ցուցումներ և հանձնարարություններ է տալիս Կենտրոնի աշխատակիցներին և վերահսկում դրանց կատարումը,
6) ստորագրում է Կենտրոնի գործունեության հետ կապված փաստաթղթերը,
7) ներկայացնում է Կենտրոնը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում,
8) պատասխանատվություն է կրում Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման և գործունեության արդյունավետության համար,
9) ունի այլ լիազորություններ և պարտավորություններ, որոնք սահմանվում են աշխատանքային պայմանագրով և պաշտոնի անձնագրով:

18. Որակի ապահովման բաժինն իրականացնում է Համալսարանի կրթության որակի ապահովման և շարունակական բարելավման համակարգի մշակման աշխատանքները:

19. Որակի ապահովման բաժնի նպատակն է ապահովել կրթական գործունեության համապատասխանությունը ազգային և միջազգային չափանիշներին և նպաստել կրթության որակի շարունակական բարելավմանը:

20. Որակի ապահովման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) մշակում է որակի ապահովման չափորոշիչներն ու ընթացակարգերը և ապահովում դրանց կիրարկումը,

2) կատարում է նոր և վերանայված կրթական ծրագրերի և ուսուցման գործընթացների մշտադիտարկում, գնահատում և վերլուծություն, կազմում է փորձագիտական եզրակացություն և ներկայացնում Համալսարանի ռեկտորին՝ ներառելով դրանց բարելավման վերաբերյալ առաջարկություններ,

3) մեթոդական աջակցություն է ցուցաբերում ֆակուլտետներին և ամբիոններին՝ ուսուցման վերջնարդյունքների (learning outcomes) ձևակերպման և դրանց հիման վրա կրթական ծրագրերի կազմման, արվեստանոցային և խմբային աշխատանքի (project-based learning, studio-based learning) վրա հիմնված ուսուցման վերաբերյալ ծրագրերի մշակման, միջառարկայական դասավանդման (interdisciplinary teaching) մեթոդների ներդրման, վերջնարդյունքների վրա հիմնված ուսումնառության (outcome-based education) և կարողությունների հիման վրա գնահատման (competence-based assessment) նոր մոդելների ներդրման, կրթական գործընթացներում արհեստական բանականության հնարավորությունների կիրառման, արտաքին ծրագրերին մասնակցող համալսարանական թիմերին նախապատրաստման, ուսումնական պլանների կազմման (curriculum design), ինքնավերլուծության և հավատարմագրման գործառույթների շրջանակում,

4) կազմակերպում է հարցումներ ներքին և արտաքին շահակիցների շրջանում և ապահովում ստացված տվյալների հավաքագրումն ու վերլուծությունը՝ ներգրավելով համապատասխան ֆակուլտետներին և ամբիոններին,

5) մասնակցում է արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին,

6) մասնակցում է կրթության որակի բարելավմանն ուղղված դրամաշնորհային ծրագրերի մշակմանը, մոնիթորինգին և արդյունքների գնահատմանը:

21. Շարունակական և լրացուցիչ կրթության բաժինն իրականացնում է շարունակական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի կազմակերպման և զարգացման աշխատանքները:

22. Բաժնի նպատակն է նպաստել մասնագիտական կարողությունների շարունակական զարգացմանը և աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ կրթական ծառայությունների մատուցմանը:

23. Շարունակական և լրացուցիչ կրթության բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) *մասնակցում է շարունակական մասնագիտական զարգացման ծրագրերի մշակմանը, կազմակերպում և իրականացնում է շարունակական և լրացուցիչ կրթության, վերապատրաստման և վերաորակավորման դասընթացներ,*
2) *համագործակցում է ոլորտային գործընկեր կազմակերպությունների հետ՝ ապահովելով շարունակական և լրացուցիչ կրթության և դրանց կազմակերպման վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը,*
3) *դասընթացների վարման համար ներգրավում է դասախոսների և փորձագետների,*
4) *կազմակերպում է մասնակիցների (մասնագետների) գրանցման և դասընթացների փաստաթղթավորման գործընթացները,*
5) *աջակցում է հեռավար, թվային և հիբրիդային ուսուցման ձևաչափերի ներդրմանը,*
6) *մշակում և իրականացնում է դասախոսների կրթական և մանկավարժական կարողությունների զարգացման ծրագրեր,*
7) *նպաստում է շարունակական և լրացուցիչ ուսումնառության՝ դասավանդման արդիական մեթոդների, արդյունքահենք գնահատման մոդելների ներդրմանը և կիրառմանը:*

24. Ռազմավարական պլանավորման և զարգացման բաժինն աջակցում է Համալսարանի ռազմավարական զարգացման և ինստիտուցիոնալ պլանավորման գործընթացներին և համակարգում է այդ գործընթացներին առնչվող փաստաթղթերի մշակման աշխատանքները:

25. Բաժնի նպատակն է նպաստել Համալսարանի երկարաժամկետ կայուն զարգացմանը:

26. Ռազմավարական պլանավորման և զարգացման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) *մասնակցում է ռազմավարական փաստաթղթերի մշակմանը,*
2) *մշակում է ռազմավարական ծրագրերի իրականացման պլաններ,*
3) *իրականացնում է Համալսարանի տարբեր ոլորտային ուղղությունների զարգացմանը և առաջընթացին առնչվող ցուցանիշների վերլուծություն և մշտադիրտարկում,*

4) *աջակցում է միջազգային վարկանիշավորման և համեմատական վերլուծության գործընթացներին՝ մասնակցելով տվյալների հավաքագրման, վերլուծության և միջազգային հարթակներում դիքավորման բարելավման աշխատանքներին,*

5) *կազմակերպում և համակարգում է կրթության որակի բարելավմանն ու արդիականացմանը միտված ուսանողական մրցույթներ, գաղափարների ներկայացման հարթակներ և գործատու-համալսարան համագործակցության նախաձեռնություններ:*

IV. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

27. Կենտրոնը Համալսարանի կառավարման համակարգում հանդես է գալիս որպես

1) կրթության որակի ապահովման,
2) զարգացման և նորարարության,
3) ռազմավարական պլանավորման,
4) տվյալների հավաքագրման, վերլուծության և մեկնաբանման համակարգող և վերլուծական օղակ:

28. Կենտրոնի գործունեության կառավարման մոդելը հիմնված է «**Պլանավորում**», «**Իրականացում**», «**Մշտադիտարկում և վերլուծություն**», «**Բարելավում և որոշումներ (Plan–Do–Check–Act (PDCA))**» ցիկլի վրա:

32. «**Պլանավորում**» փուլում իրականացվում է՝

1) կրթական և ինստիտուցիոնալ զարգացման առաջնահերթությունների ձևակերպումը,
2) տվյալահենք նպատակների և ցուցանիշների (KPI) սահմանումը,
3) պլանային գնահատումների և վերլուծությունների շրջանակի որոշումը:

29. «**Իրականացում**» փուլում համալսարանի համապատասխան ստորաբաժանումների կողմից իրականացվում են կրթական, կազմակերպչական և զարգացման գործունեություններ՝ սահմանված ծրագրերի համաձայն:

30. «**Մշտադիտարկում և վերլուծություն**» փուլում Կենտրոնը հավաքում և վերլուծում է

1) գնահատումների,
2) հարցումների,
3) ցուցանիշների արդյունքները՝ գործող մեթոդական փաստաթղթերին համապատասխան:

31. **«Բարելավում և որոշումներ»** փուլում Կենտրոնը ներկայացնում է վերլուծական եզրակացություններ և առաջարկություններ կառավարման մարմինների կողմից բարելավման և զարգացման որոշումների ընդունման համար:

32. Կենտրոնն իր գործունեության շրջանակում աջակցում է համալսարանի տվյալահենք կառավարման համակարգի ձևավորմանն ու կիրառմանը: Տվյալահենք կառավարման հիմքում ընկած են քանակական և որակական տվյալները, համադրելի ցուցանիշները և դրանց ժամանակային փոփոխությունների վերլուծությունը: Կենտրոնի կողմից իրականացվող տվյալների հավաքագրումը և վերլուծությունը հիմք են հանդիսանում համալսարանի կառավարման մարմինների կողմից կրթական, ռազմավարական և զարգացման որոշումների ընդունման համար:

33. **«Տվյալահենք կառավարման ցուցանիշները»** (KPI) կիրառվում են կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման, կառավարման որոշումների հիմնավորման և զարգացման միտումների բացահայտման նպատակով:

34. Ցուցանիշների կիրառումը չի հետապնդում պատժիչ բնույթի գործողությունների իրականացման նպատակ և ուղղված է բարելավման և զարգացման գործընթացների աջակցմանը:

35.Կենտրոնի գործունեության մեջ կիրառվում է հիմնագծի (**baseline)** մոտեցումը, որի նպատակն է՝

1) ձևավորել ելակետային իրավիճակի նկարագիրը, որը դիտարկվում է որպես զարգացման ծրագրերի մշակման մեկնակետ,
2) ապահովել հետագա զարգացումների համադրելիությունը:

36. Կենտրոնի կողմից իրականացվող գնահատումներն ու վերլուծություններն ուղղված են շարունակական զարգացման և բարելավման մշակույթի ձևավորմանը, իսկ դրանց արդյունքները կարող են կիրառվել կրթական ծրագրերի բարելավման, ռազմավարական պլանավորման, արտաքին գնահատման և հաշվետվությունների պատրաստման գործընթացներում:

V. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

37. Սույն կանոնակարգը և դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները հաստատվում են Համալսարանի գիտական խորհրդի կողմից:

38. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Համալսարանի գիտական խորհրդի կողմից հաստատվելուց հետո՝ հաջորդ աշխատանքային օրվանից:

39. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում Կենտրոնը մշակում և Համալսարանի գիտական խորհրդին է ներկայացնում հետևյալ ներքին իրավական ակտերի նախագծերը.

1) շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման նպատակով Կենտրոնի կողմից իրականացվող հարցումների կազմակերպման ընթացակարգը,
2) նոր և վերանայված կրթական ծրագրերի փորձագիտական գնահատման ընթացակարգը:

Գիտական քարտուղար Լ.Հ. Լևոնյան

18 մարտ 2026թ.

Արձանագրություն N°02-03/26